Խաղեր, խաղերգեր, հաշվերգեր

«Բնական», շրխկան և հարվածային նվագարաններ

«Բնական նվագարաններ»-ը մեր ձեռքերն ու ոտքերն են, որոնցով կատարում ենք՝

- ✓ մատների ճթթոց
- ✓ ծափ
- ✓ հարված ծնկներին
- ✓ ոտքերով հարված գետնին

Հարվածային նվագարանների դերում կարող են հանդես գալ փայտիկները, կարկաչաները, տարբեր հնչողության շրխկանները, ինքնաշեն շրխկանները, ճեռերը, փայտյա և մետաղե գդալները, դափերը, թմբուկները, զանգակները և, ընդհանրապես, այն ամենը, ինչը կշրխկա, կզնգա, կթխկա և այլն:
Նրանցով կարելի է նվագակցել երգին, ունկնդրվող երաժշտությանը, կատարել ռիթմիկ վարժություններ, խաղարկել խաղեր: Կարելի է հետաքրքիր երկխոսություն կատարել ինչպես զույգերով, այնպես էլ խմբերով: Բեմադրություններին կարելի է օգտագործել տեմբրային տարբեր հնչողություններ: Ստեղծագործող և երևակայություն ունեցող դաստիարակի համար մեծ ջանք չի պահանջվում տեղին և հնարամիտ օգտագործել դրանք:

«Հիմար – իմաստուն» վիճակի արարողությունը.

Իրականում 10 թղթակտորներից հինգի վրա գրվում էր «իմաստուն», հինգի վրա՝ «հիմար» բառերը: Տասը երեխա վերցնում էին մեկական թուղթ: Մտքում որևէ իղձ պահած անձինք նախապես ընտրում էին երեխաներից որևէ մեկին: Սրան «իմաստուն» վիճակն ընկնելը նշանակում էր իղձի իրականացում, «հիմարի» դեպքում՝ տապալում:

Երեխաների հետ կարելի է խաղալ խաղի այլ՝ մանկական տարբերակ:

Երեխաները թղթակտորների վրա նկարում են որևէ ցանկության պատկերը, ծալում են թուղթը, գցում արկղիկի մեջ: Կատարում են վիճակահանություն, յուրաքանչյուրը մի «վիճակ» է վերցնում, փորձում է նկարով գուշակել երազանքը: Պայմանավորվում են՝ եթե ճիշտ գուշակի, երազանքը կկատարվի:

«Չիք-չիք, աղամ»

Խաղը խաղում են երկու խմբով:

Առաջին խումբ - Չիք, չիք, ի՞նչը չիք:
Երկրորդ խումբ - Չիք, չիք, կծան շունը չիք:

Այսպես հարց ու պատասխանով խաղում են և «չիք» անում (չքացնում, ոչնչացնում) այն ամենը, ինչ համարում են վատ, իրենց խանգարող, չար:

Նույնը խաղում են՝ աղալով այն ամենը, ինչ համարում են վատ, իրենց խանգարող, չար:
Երեխաներից մեկը վերցնում է երկու հարթ քար, շրջանաձև քսում իրար և հարցնում.
- Աղամ, աղամ, ի՞նչը աղամ:
Երեխաներից մեկն ասում է.
- Վախկոտությունը:
Քարերը իրար շրջանաձև քսելով իրար, երեխան ասում է.
- Աղամ, աղամ, վախկոտությունն աղամ:
Վերջին բառերը կարող են ասել նաև խմբով:
Աղում և չիք են անում վախը, սուտը, աղբը, ցուրտը և այլն:

ա. « Անձրև»

Կարկաչաներով սկսում են կամաց շրխկացնել -անձրևը նոր է սկսվում:
Հետզհետե ուժեղացնում են շրխկոցները - անձրևը ուժեղանում է:
Շրխկոցներին միանում են ոտքերի հարվածները - անձրևը շատ ուժեղ է:
Ոտքերի հարվածները դադարում են, կարկաչաները հետզհետե մեղմացնում են շրխկոցները: Քիչ անց անձրևը դադարում է: Շարունակում են միայն կլթկլթացնել լեզվով՝ հետզհետե դանդաղեցնելով ու կամացացնելով:

բ. « Կարկաչա»

Երկու երեխա կանգնում են իրար դիմաց, ձեռքերը պահում կրծքի ուղղությամբ, արմունկները ծալած, ձեռքերի ափերը նայում են իրար: Երեխաները ձեռքերը այդ դիրքով մոտեցնում են այնքան, մինչև մեկի ափը հայտնվում է մյուսի ափերը մեջ.
- երեխաներից մեկը ծափ է տալիս՝ ափերով խփելով մյուսի ափին.
- նույնն անում է մյուս երեխան:
Կարելի է խաղալ ռիթմիկ երաժշտության ուղեկցությամբ կամ առանց երաժշտության:

գ. «Ձվերն ու կարկաչաները»

Երեխաները բաժանվում են ձվերի ու կարկաչաների: Ձվերն ընտրում են իրենց համար գույներ: Երեխաները որոշում են, թե ինչ ռիթմով և ուժգնությամբ պետք է շրխկացնեն յուրաքանչյուր գույնը: Հերթով առաջ են գալիս ձվերը, կարկաչաների

խումբը շրխկացնում է համապատասխան ռիթմը: Խաղի ընթացքում դերերը կարող են փոխվել:
Ամեն անգամ խաղալիս ըստ ցանկության կարելի է փոխել գույների ռիթմիկ կառույցը: Բացի կարկաչաներից կարելի է օգտագործել այլ շրխկաններ, ինչպես նաև «բնական» հարվածային ձայներ:

Երաժշտական խաղ «Ջաղացս մանի, մանի»

Երգի կատարումը կարելի է սկսել ջրաղացի մասին ասացվածքներ ասելով.

- ✓ Ես՝ աղա, դու՝ աղա, բա մեր աղու՞նն ով աղա:
- ✓ Ջահելի խելք՝ անջուր ջրաղաց:
- ✓ Մուկն ալրատանը խեղճ չի մնա:
- ✓ Ջաղացից ես եմ գալիս, դու ե՞ս ալրոտել:
- ✓ Ամեն մարդ ջուրն իր ջաղացը կապի:
- ✓ Անջուր ջրաղացը ալյուր չի աղա:
- ✓ Ջաղացը ջուրն է տարե, նա չախչախն է ման գալի:
- ✓ Ջաղացիդ միշտ հերթ լինի, մեջքդ ամուր բերդ լինի:
- ✓ և այլն:

Ապա շարունակել **«Ջրաղաց»** խաղով:

Երեխաներից մի քանիսը դառնում են ջրաղացի պտտվող անիվ, որին պտտում է ջուրը(նույն քանակով երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը բռնում է անիվ դարձած երեխաներից մեկի ձեռքից) և, թեթև, ռիթմիկ քայլերով պտտվելով, ռիթմիկ վանկարկում. «Գառ, գոռ, գուռ»: Երեխաներից մի քանիսը դառնում են ջրաղացի քար: Երբ անիվն սկսում է պտտվել, ջրաղացի քար դարձած երեխաները, ձեռքերն իրար ուսի վրա դրած, պտտվում են ու ռիթմիկ վանկարկում. «Չախկ, չոխկ, չուխկ»՝ միաժամանակ հարվածելով ոտքերով: Քիչ անց ջրերն ու անիվը դառնում են ցորեն և մոտենում ջրաղացքարին: Վերջինս տեղում կանգնելով և շարունակելով վանկարկումը, մի տեղ է բացում ցորենի համար: Ցորենը, վանկարկելով՝ «Թափ, թոփ, թուփ», մտնում է շրջանի մեջ: Ջրաղացքարը միանում և շարունակում է պտտվել: «Ցորեն» երեխաները ցուցադրում են ցորենի աղալը՝ անկանոն թռչկոտելով, զմփիկներով և այլն: Քիչ անց քարը նորից կանգնում է՝ չդադարեցնելով վանկարկումն ու քայլքը: Այս անգամ, վանկարկելով՝ «Փառ, փոռ, փուռ», դուրս է «թափվում» ալյուրը: Խաղի ընթացքում կարող են օգտագործվել համապատասխան հնչողությամբ հարվածայիններ կամ շրխկաններ:

Որից հետո կատարել երգը: Երգի կատարումն կարելի է սկսել ռիթմիկ արտասանությամբ.

- Չըխկ, չըխկ, չըխկ, չըխկ:

Միանում են նույն ռիթմով ծափերը: Ապա միանում են մի քանի շրխկաններ:
Երգի տողերը երգելիս՝ հարվածները դադարում են, իսկ կրկնվող տողը նորից ուղեկցվում է ռիթմին համապատասխան ծափերով (ցանկության դեպքում՝ նաև շրխկաններով):
Ջրաղացի անիվի շարժումը ցուցադրելու համար երկուսով կանգնում են դեմ դիմաց, ձեռքերը հագուցում իրար և շրջանաձև պտտում մեկ՝ դեպի իրեն, մեկ՝ դեպի դիմացինը: Կարելի է նաև ձեռքերը հերթով պտտել՝ նախ աջը, հետո ձախը (մեկ՝ դեպի իրեն, մեկ՝ դեպի դիմացինը):
Երգը կարելի է կատարել.

- շրջանաձև պտտվելով՝ որպես ջրաղացի քար,
- զույգերով,
- սկզբից՝շրջանով, ապա շարունակել զույգերով:

Երգը ավարտվում է շրխկանների ռիթմիկ շրխկոցներով, որոնք հետզհետե մեղմանում են և մարում:

«Խնոցի, հարոցի» - 1

Խաղում են.

ա. Երկուսով, յուրաքանչյուրը աջ ձեռքով բռնում է իր դաստակից: Կանգնում են իրար դիմաց, յուրաքանչյուրը ձախ ձեռքով բռնում է դիմացինի աջ դաստակից: Նրանք դառնում են ճոճանակ: Մի փոքր երեխա նստում է նրանց ձեռքերին, իր ձեռքերով փաթաթվում նրանց վզին, իսկ նրանք տարուբերում են ու արտասանում կրկնակն ու առաջին տունը: Վերջին տողն ասելիս, իջեցնում են երեխային ու, ծափ տալով, ասում. «Տփեցի՛»: Տեքստը կարելի է շարունակել «բ» տարբերակով:

բ. Զույգերով, իրար դիմաց կանգնած, ձեռքերի մատներն իրար հագցրած, ոտքի մեկն առաջ, մյուսը՝ հետ: Ռիթմիկ շարժումով, նմանեցնելով խնոցու ետուառաջ գնալ - գալու շարժմանը, մի ոտքից մյուսը տեղափոխվելով, ձեռքերը ռիթմիկ, կտրուկ շարժումով առաջ ու ետ տանելով, ասում են.
կրկնակ.
Առաջինը – Խնոցի,
Երկրորդը – Հարեցի:
Միասին – Հոփփը, լրփփը (կրկնում են 6 անգամ)
Զրմփը, դրմփը (6անգամ)
Ծափը, ծրփը(6անգամ)

1. - Խնոցի,
   - Հարեցի.
   Թանը հանի՝ քամեցի,

Սրսուռ չորթան շինեցի,
Եղով ապուր եփեցի,
Պետոն ուզեց՝ տփեցի:

2. -Խնոցի, խնոցի,
Գցեցի ու բռնեցի,
Տարա - բերի՝ զարկեցի,
Հրեցի, չխչփեցի,
Հարեցի, հա, հարեցի,
Դեղին կարագ հանեցի:

3. - Խնոցի,
- Հարեցի.
Լըփը, ըփը, լըրընգա,
Դե տար, դե բեր, տըրընգա.
Թև տու, թև առ,
Զըրընգա:

կրկնակ.-
Կրկնակը կարելի է կատարել՝ հերթով իրար փոխանցելով կրկնվող բառերը: Խաղի ավարտից անմիջապես հետո, երգում են «Հարի, հարի, խնոցի» երգը:

«Հարի, հարի, խնոցի»

Երգը կատարում են զույգերով, իրար դիմաց կանգնած, ձեռքերի մատներն իրար հագցրածած, ոտքի մեկն առաջ, մյուսը՝ հետ: Ռիթմիկ շարժումով, նմանեցնելով խնոցու ետուառաջ գնալ - գալու շարժմանը, մի ոտքից մյուսը տեղափոխվելով, ձեռքերը ռիթմիկ, կտրուկ շարժումով առաջ ու ետ տանելով: Երգը կարելի է ավարտել՝ ասելով.
-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

«Խնոցի, հարոցի» - 2

Երկուսով կանգնում են մեջք – մեջքի, թևերն հագցնում իրար մեջ: Նրանցից մեկը թեքվում է առաջ՝ մյուսին շալակելով ու ոտքերը գետնից կտրելով: Նույնն էլ անում է մյուսը: Խաղում են ռիթմի մեջ՝ ասելով.
- Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ սար հանեմ:
- Խնոցին հա հարեմ,
Շալակեմ՝ գետն անցնեմ:
- Խնոցին հա հարեմ,

Շալակեմ՝ դաշտ տանեմ:
- Խնոցին հա հարեմ,
Կաթ ու մածուն կերցնեմ:

Կարելի է նույնն անել՝ ասելով.
-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

«Խնոցի, հարոցի» - 3

Խաղում են զույգերով, իրար դիմաց կանգնած, ձեքերի մատներն իրար հագցրածած, ոտքի մեկն առաջ, մյուսը՝ հետ: Ռիթմիկ շարժումով, նմանեցնելով խնոցու ետուառաջ գնալ - գալու շարժմանը, մի ոտքից մյուսը տեղափոխվելով, ձեռքերը ռիթմիկ, կտրուկ շարժումով առաջ ու ետ տանելով, ասում են.
-Խնոցի, հարոցի, թանը՝ քեզ, կարագը՝ մեզ:

« Մածուն – մածուն»

Երկու երեխա բռնում են երրորդի ձեռքերից, որը կճուճով «մածուն»-ն է, ու քայլելով վանկարկում. «Մածուն, մածուն, սարի մածուն, ում տանք՝ ուտի սարի մածուն» (երգում են երկու հնչյունով՝ 6/8 չափի մեջ): Երեխաներից մեկը մոտենում է և մածուն ուտելու ցանկություն հայտնում: Երեխաները բաց են թողնում «կճուճով մածունի» ձեռքերը, որը կքանստում է, ձեռքերի մատերը հագուցում իրար ու ձեռքերը կրծքի ուղղությամբ շրջանաձև պահելով, ցուցադրում «կճուճի բերանը»: Մածուն ուտելու ցանկություն հայտնած երեխան ձևացնում է, թե գդալով մածուն է ուտում կճուճի միջից: Այսպես, հերթով, խաղում են բոլորը:

Խաղերգեր

«Եկեք ծեծենք»

Երեխաները բաժանվում են երկու խմբի: Երգը կատարվում է խաղի նման: Խաղում են զույգերով՝ երգի ռիթմով նշված մարմնի մասով իրար թեթև խփելով: Կարող են խաղալ նաև առանձին: Կարելի է կատարել հետևյալ տարբերակներով.

- առաջին խումբը հարցնում է, երկրորդը պատասխանում,
- մեկ անգամ հարցնում է մի խումբը, մյուս անգամ՝ մյուսը,
- հարցնում է մեկը, պատասխանում՝ խումբը, և հակառակ:

Բացի տեքստում նշվածից, կարելի է ավելացնել.
մեջքով
ուսով

կողքով
փորով
դնչով և այլն

Տիտոխիկ

Սա մանկական հաշվերգի շատ հետաքրքիր և ինքնատիպ նմուշ է:
Երեխաները կանգնում են շրջանաձև: Նրանցից մեկը մտնում է շրջանի մեջ: Երգի ռիթմով թռչկոտելով, սկսում է երգելով հերթով հաշվել երեխաներին: Ով հաշվի մեջ վերջինն է՝ դուրս է գալիս շրջանից: Այսպես հաշվում են, մինչև մնում է մեկ երեխա: Վերջին խոսքերի հետ կարող են ձեռքերով ցուցադրել թռչունի թևեր և, թևերը վեր բարձրացնելով, թռցնել թռչունին:

Տիտոխիկ, տիտմարոխիկ,
Զուռնափչիկ, Թուխ Մանուկիկ,
Էփե գաթա ու կուլուճա,
Եղը վրեն կըպըճպըճա,
Ուտա իդա, խմա իդա,
Էլնա ինա:
-Վի՞ր տուն իջնա:
-Նուբարի տուն:
-Էս՝ Նուբար,
Էս՝ կատուն,
Էս՝ մուկիկ,
Էս՝ լորիկ,
Թռավ, գնաց՝ թը՛ռ, թը՛ռ, թը՛ռ:

Թուխ Մանուկ - առասպելական ոգի, քաջության և առաքինության հովանավոր: